## Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր  N 2

## N ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-48
## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան  <<23>>. <<07>>. 2025թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրառու), մի կողմից, և **ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն»ՓԲԸ-ն** (այսուհետ՝ Կատարող) ի դեմս Ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Վարդազարյանի, հիմք ընդունելով 14.02.2025 թվականին կնքված ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-48 գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի վճարման կարգը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-48 ծածկագրով գնման պայմանագրի 4.1 կետով սահմանված **20 000 000** (քսան միլիոն) ՀՀ դրամ գումարին ավելացնել ևս **5 000 000** (հինգ միլիոն) ՀՀ դրամ, որի արդյունքում ընդհանուր գումարը կկազմի **30 000 000** (երեսուն միլիոն) ՀՀ դրամ, հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետը, որի վճարումը պատվիրատուի կողմից կիրականացնի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

1.3 Համաձայնագրի պայմանները կիրառվում են նաև պայմանագիրը կնքելուց հետո մինչև սույն համաձայնագրի կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ | Կ Ա Տ Ա Ր Ո Ղ |
|---|---|
| ՀՀ ներքին գործերի նախարարություն | ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ |
| ք. Երևան, Նալբանդյան 130 | հասցե՝ ք. Երևան, Աճառյան 2-րդ նրբ., շենք 2 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | Բանկ՝ ԱյԴի բանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900011042471 | Հ/Հ 11813017106900 |
| ՀՎՀՀ 02882913 | ՀՎՀՀ 00886932 |
| Հեռ. 010 59-61-52 | Հեռ: 012272727 |
| Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am | Էլ. Փոստ: ncat.gnumner@mail.ru |
| _______ Ա. Ֆիդանյան | _______ Գ. Վարդազարյան |
| /ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/ | |

Հավելված N 1
<<23>> 07 2025թ.
ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-48 ծածկագրով գնման պայմանագրի

**Վճարման ժամանակացույց**

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 85111120/1 | Հիվանդանոցների կողմից մատուցվող բժշկական ծառայություններ | | | | | | | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

Ա. Ֆիդանյան
/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ
հասցե՝ ք. Երևան, Աճառյան 2-րդ նրբ., շենք 2
Բանկ՝ ԱյԴի բանկ ՓԲԸ
Հ/Հ 11813017106900
ՀՎՀՀ 00886932
Հեռ: 012272727
Էլ. Փոստ: ncat.gnumner@mail.ru

Գ. Վարդազարյան
/տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար/
(ստորագրություն)
Կ.Տ)